48. ՕՍԿԵՐՉՈՒ ԿՆԻԿ

Կէղնի, չէղնի մարդըմ կէղնի ու ուրին մեկ տղա։ Էդ մարդ բեհըսապ զանկին կէղնի։

Տղեն ջուրջըլխանիմ մեկ կէղնի ախպըրգըրներու հետ, կնկդոց հետ կհ՚ընկնի, ղհոր ունեցած ու չունեցած կուտե, կհ՚ընկնի աղքըտութենի մեջ։

Տղի հերն է, կմտածե օր ուր մահվանեն վերջ տղեն ճարնկնութեն պիտի էնե ու ձեռք չհ՚ընկնի, բերեց զուր հարստութեն դունդըմ էրեց, դրեց հ՚առեջ ու տախտկեց, ասեց.—Լաո՛, վաղ ես կըմեռնեմ, ֆուխարութենի մեջ օր հ՚ընկար, էլ մարդ գքու ձեռք չըռնեց, էկո, էձգե ջըրիդ էդա տեխ, կախվի խեղդվի։

Հերն հ՚ընկավ մեռավ։

Տղեն զուր քեֆին թարկ իսկի չտվեց, կերավ ու խմեց։ Օրըմ շուկի մեջ կէրթեր կիդեր, տաս փարա չըկեր ճեպ, տեսավ օր ուր ախպըրգըրներ զիրար կքոմին, կէրթան կերուխումի ու զինք չկանչեցին, ուրին էղավ մարախ։ Ջճեր խուրդալամիջ էրեց, տեսավ քառսուն փարա մանցեր էր քիսի տակ, հանեց տվեց ճիդարըմ առավ։ Առավ ղճիգարն ու հ՚ընկավ ախպըրգըրներու հ՚ետև, գնաց օր քաղքեն հ՚էլավ դուրս, գճիգար դրեց վըր քարերուն, գնաց օր դուրս հ՚էլներ, թազին էկավ վերցուց ղճիգարն ու առավ գնաց։ Տղեն էկավ տեսավ օր ճիգար չկա, թազին տարեր է, զձեռք դրեց ծոցք ու քոռ փոշման հ՚էլավ գնաց հասավ ուր ընկերներուն. տե-

26—276

սավ օր ընկերները նստուկ ին, կերուխում կէնեն։ Բարև տվեց։ Ընկերներ զրարև առան ու նստան. օր նստավ, ընկերներ ձեն չհանին, իսկի չէ չհարցուցին, թե հ'որի՞ էկար, հ'ո՞րի չէկար, ինքն ուրին վերուց ասեց.—Ընկերնե՛ր, հ'էսօր իմ գլուխ բանըմ էկի։

Ասին.—Ի՞նչ է։

Ասեց.—Դուք օր էկաք, ես տեսա զձզի, էկա օր ձղի հասնեք, փարա չկեր իմ մոտ, յուխլամա էրի, քառսուն փարա հ'էլավ ճեբիս մեջ, տվի առա ճիգարըմ, օր առնեք հետս հ'իգենք քիչըմ շոռշոռիկ քապապ էնենք, էնենք մըզիկ մազա։ Առա էկա, դրի քարու վրեն՝ դուրս կէլնեք, հեղըմ լէ տեսա, էկավ թազին առավ գնաց, ինչ էրի՝ անկաճ չէրեց, առավ ու փախավ։

Ախպըրգըրներ էնդիեն վերցին ասին.—Պատռա՛ր, հա՛ պատռար, մարդ հըմլա սո՞ւտ լէ կասե, թազին հիչ ճիգար կուտե՞։

Տղեն էն տեխեն հ'ընկերներու ասածի վրեն սիրտ հ'էլավ, թողեց էկավ տուն։ Ասեց. «Իմ հոր ասած կատարվավ»։ Ը՛ր օր էկավ տուն, փնտրեց շըրիդըմ գտավ, տարավ հոր ցուցուցած տեխ օր խեղդվեր, մեկ էլ տեսավ գունդըմ փըրթավ շըխը՛ռ, օսկիք էկան ցած ու ինք լէ՝ հետ։

Խելք էկավ գլուխ, հ'էլավ ժողվեց։

Ասեց.—Օղորմի հըմալ հոր հոգուն, ի՞նչ խելոք մարդ է էղի, օր գիցեր է, ես կհ'ընկնեի նեղութենի մեջ, բերեր է, ղէդա փարեն էդա տեխ պահե։

Հ'էլավ մեկ էլ լուսուն աղեկըմ զինք դուզմիշ էրեց, հագավ, խըրվավ ու զուր հ'ընկերները դավաթ էրեց, բերեց ուր տուն։

Նստան, կերան, խմեցին։ Օր կերան խմեցին, ասեց.—Ընկերնե՛ր, էսօր փորձանքըմ հ'էլավ իմ գլուխ։

Ասին.—Աստված զխեր էնե, ախպեր շան, ի՞նչ է էղի, ի՞նչ է հ'էլի քու գլուխ, ասե տեսնանք։

Ասեց.—Իմ հոր վախտեն [illegible] հըմկա քիչըմ սամախոս էր մանցի դրուկ, ամրրի գլուխ, հ'էսօր հ'էլա գացի տեսա, օր մկներ հըմալ ին սղկած՝ բան չըն թողած։

Ընկերներ վերցին ասին.—Օղորդ է, մուկն էրկաթ կուտե։

Ասեց տղեն.—Օր մուկն էրկաթ կուտե, ըպա թազին իմա՞լ ճիգար չուտե, ես օր հ'էրեկ ասի ձըզիկ, թե թազին զճիգար տարավ, հ'որի՞ն ծիծղացիք վրես, ասիք՝ սուտ կէղնի, հըմլա թըղ էղնի, թազին ճիգար ե՞ր կուտե։ Օր հըմալ է, դուք վըր ընծիկ

կծիծղեք, խաբեցիք զիս, կերաք զիմ փարեն, փարեն օր խըլըսավ էլ հ՝էրեսս չիշքիք, հայտե՛, իմ տնեն դուրս։

Էրեց ուր տնեն դուրս, գնաց։

Զախպըրգըրներ օր դուրս էրեց խըլըսավ, ըստհաղ գնաց ուրին ձեռքըմ ուրիշ հ՝ընկեր պատրաստեց, ինչ օր գտեր էր, զէն լէ կերավ ախպըրներու հետ խըլըսցուց, մեկ լէ հ՝առջի հալ գտավ։

Օր հ՝առջի հալ գտավ, ասեց.—Ես էլ էդա հ՝էրկիր իդարա չըմ էնի, պիտի էրթամ խուրբաթ։

Հ՝էլավ գնաց, ասեմ գնաց Իստանպուլ։

Ը՝ր օր հասավ կարմնջի գլուխ, թուճարըմ տեսավ, օր բեհրսապ վասիաթի տեր էր։ Գնաց էդ թուճրի խեչ կանավ, հար հ՝իրկուն կանավ, մութ տվեց գետին։

Թուճարն տեսավ օր էդ տղեն անոթի, ծառավ լուսմութե հար հ՝իրկուն մնաց ուր դուքնի հ՝առեջ կանուկ, ասեց.—Ախպե՛ր, դու լուսմութե հար էդագահ էկեր ես էդա տեխ կանե, ի՞նչ կէնիս, էդա Իստանպոլ է, խարիբ քաղաք է, գնա քզիկ տեխըմ գտի, պառկի, հ՝որի՞ կմնաս էդ տեխ կանուկ։

Տղենն ասեց.—Խարի՛բ իմ, տեր ու տիրական չունիմ, փարա չունիմ, հ՝ո՞ւր էրթամ, իմ տեր ու տիրական օր կա դու իս։

Ասեց.—Օր հըմալ է, քելե էրթանք մըր տուն։

Առավ հետ, գնաց տուն։ Էդ թուճրին ավլատ թավլատ չկեր։ Ասեց.—Տղա, քզիկ հորնե, մորնե, կնիկ, ճժուց ի՞նչ կա հ՝էրկիր։

Տղեն ասեց.—Բան լէ չունիմ, թաք, վոհիդ իմ։

Ասեց.—Տղա՛, մադամ օր թաք իս, քզիկ մարդ չկա քու հ՝էրկիր, էկո էղի ընծիկ տղա։

Տղեն ասեց.—Բաղրկա՛ն բաշի, աղեկ կասես, բան չունիմ ասելիք, մինակ իմ ձեռքեն դատք ու դաղում չիգա, իմ խեչ լէ փարա էղնի, օրական հարեր օսկի կուտիմ, կխմիմ։

Բաղրկան բաշին ասեց.—Տղա՛, դու էկո էղի ընծիկ տղա, չէղավ օրական լէ հինգ հարեր խըռոշ կիտամ քզիկ, տար խըրճե։

Բերին ինք ու ուր կնիկ, կանչեցին ղուրանց աստված, հ՝ընցուցին ուրանց փողպըտով, էրին ուրանց տղա։ Պառկան քնան, հ՝էլան լուսմութին, թուճարն հանեց հինգ հարեր խըռոշ տվեց տղին, ասեց.—Տա՛ր քզի խարճե։

Տղեն առավ զհինգ հարեր խըռոշն ու հ՝ընկավ մըջ քաղքին, հար հ՝իրկուն զարկեց, զարկվավ, տաս փարա չմնաց ճեբ, դարձավ էկավ։ Զորս օր վերարու, տղեն հինգ հարեր խըռոշ տարավ, կերավ ու

խմեց։ Օրըմ ինքն ուրեն մտածեց տղեն, ասեց. «Ջանըմ, ես ի՞նչ է կէնիմ, իմ հոր հարստութեն կերա, թաքրար աստված տվեց, զէն լէ կերա, հմկա լէ էկեր իմ էդա մարդու մոտ, աստված տվեր է ընծիկ, չըմ կառնա վելի, օրական հինգ հարեր խրոոշ կտանիմ, հար հ'իրկուն կուտիմ, կդառնամ հ'իգամ, ես ի՞նչ է կէնիմ, բալքիմ էդ մարդ վաղ աւաց ընծիկ՝ թող գնա, ընծիկ պետք չես, ես ի՞նչ էնիմ, հ'ո՞ւր էրթամ ապրեմ։ Ասեց ես զէդա սավդեն թարկ պիտի էնիմ»։

Հ'էլավ լուսուն, բազրկան հանեց հինգ հարեր խրոոշ տվեց տղին։

Տղեն ասեց.—Աբո՛, վալայի, չըմ էրթա, քու փարեն դիր քու ջեբ, թարկ էրեր իմ, էլ ուտելու խմելու հ'ետևեն չպիտի հ'ընկնիմ։

Բազրկան հերն ասեց.—Լաո՛, մադամ օր հըմալ է, էկո նստի իմ խեչ։

Բերեց դրեց ուր խեչ։

Էդ քաղքին լէ ադաթըմ կեր, հ'ըմեն տարի թուճըրներ կժողվեն զիրար, հիդրաց կէրթեն թուճրուութենի, էդ մարդ լէ թուճար բաշին էր։ Ավուրըմ մեկ, հ'էլավ քսան բեռ բառցավ ու հ'ընկավ ճամբախ, գնաց թուճրուութենի։

Տղեն ասեց.—Աբո՛, ես կէրթամ, դու ըխդիարցեր ես, մ'էրթա։

Հերն ասեց.—Լաո՛, դրա դու թուճրուութեն չէրեր իս, թուճրուութենից չըս հասկնա, խարիբ տեխ է, կէրթաս կխարին առնին քու ձեռքեն, դու մանցի, էկոզ տարին գնա, բան չկա, էս տարի լէ ես կէրթամ։

Տղենն ասեց.—Քու քեֆ դինա, յա՛մ կթողիս էրթամ, յա՛մ քզիկ էլ տղութեն չըմ էնի։

Հեր էլ ձեն չհանեց, տղեն հ'էլավ քշեց զուր բեռներ ու գնաց։ Գնաց պզտիկ քաղաքիմ՝ մոտ զուր բեռներ թափեց, թուճըրներ լէ հրտ ուրանց էր։

Տղեն առավ կտորըմ հաց, գնաց ծովու պռուկ, ասեց. «Թե զիմ հաց կուտիմ, թե զծով թամաշա կէնիմ»։ Փշում՝ հաց ձեռքեն փըրթավ հ'ընկավ մըջ ծովուն, ձուկըմ կերավ, տղեն տեսավ։ Գնաց ուրեն ինչ խրգար պաշար կեր, ուր հետ առավ էկավ ու մեկ-մեկ մանտրեց ծովու մեջ ու ձրկներ կերան։ Տղեն թողեց էկավ ուր բեռներու խեչ։ Լուսուն հ'էլան թուճըրներ բառցան զուրանց բեռներ, տղեն չբառցավ։ Թուճըրներ ասին.—Տղա, բառցի էրթանք։

Տղեն ասեց.—Ես չըմ հ'իգա, ես զիմ ապրանք էդա տեխ կրծախիմ։

Տղեն հ՚էլավ գնաց քաղքի մեջ, թե Հալապի չիթ քառսուն փարա կաժեր, քսան փարա ծախեց, սարֆ էրեց զուր մալեր։ Բերեց զփարեն զարկեց հացի գլուխ, զըմեն առավ հաց։ Տարավ լըցեց ծով, ձըկտինք կերան։ Ինք մնաց նստուկ անոթի ու ծառավ ծովու պըռուկ։

Ձըկտինք հ՚իրարու հետ խոսացին, ասին.—Ջանը՛մ, էդա մարդ էդա խըդար ազեկութեն էրեց մզիկ, զուր մալ զըմեն էրեց էփուկ հաց, բերեց լըցեց մզիկ, կերանք, ազեկութեն մը լէ մենք էնինք էդ մարդուն։

Ասին ու սըկան ծովու տակ, մեկ-մեկ անգին քար խածին, հանեցին դրին ծովու պռուկ ու դառցան մտան ներս, մըջ ծովուն։

Հ՚էլավ տղեն, էդտեխ ինչ խըդար թրիք ու մրիք կեր, ժողվեց բերեց, զանգին քարեր լըցեց թրքներու մեջ, մեկ-մեկ ցան շինեց, էրեց էրկու բեռ դրեց արևու տակ չորցուց։ Էրկու բեռ լէ ուրիշ տեխե ցան բռնեց, բըլե էնդոնց մեջ բան չկեր։ Մեկէլ թուճըրներ գացին, զուրանց ապրանք ծախեցին ու դառձան էկան, հասան էդ տղին։ Ասին տղին.—Տղա՛, ղքու ապրանք ծախեցի՞ր։

Տղենն ասեց.—Ծախեցի փըրցա։

Ասին.—Տղա՛, ի՞նչ իս աշխատի։

Ասաց.—Աշխատանք չըմ դինա, բան օր գինամ տվեր իմ քսան բեռ ապրանք չորս բեռ ցան իմ առի։

Թուճըրներ տնազ էրին ու վերցին ծաղրըմ.—Մարդ զուր ապրանք ցանո՞վ լէ կիտա։

Տղեն բան չասեց։

Հ՚էլան լուսուն բառցան զուրանց բեռներ ու հ՚ընկան ճամբախ էկան։ Էկան մեկ տեխըմ թալեցին զուրանց բեռներ, գիշեր մանցին էդ տեխ։ Գողեր զարկեցին վըր էդոր, ինչ օր կեր թուճըրներուն, տարան, տկլոզցուցին, էկան տղի բեռներու վրեն, տեսան օր ցան է։ Ցան վո՞ր կտանե, մատ չտվին հ՚ինք։

Անձրև էկավ, թուճըրներ տկլոզ են, մրսան։ Օր մրսան, էկան տղին ասին.—Տղա՛, էրկու բեռ ցան տուր վառինք, կմրսինք՝ տաքնանք։

Տղեն ասեց.—Բան չըմ ասի, կիտամ, սանադրմ տվեք ընծիկ, ինչ ցան օր կիտամ ձըզիկ, էն ցանեն գնեք Իստանպոլ, իտաք ընծիկ, կիտամ։

Քսան թուճար մեկ սանադրմ տվին տղին։ Էրկու բեռ դարդակ

ցան, էն բեռներու մեջ օր անգին քար չկեր, տվեց թուճրներուն, վառեցին տաքցան։

Լուսցավ, հ'էլան հ'ընկան ճամբախ, էկան, էկան Իստանպոլ, թուճրներ գացին ուրանց տներ, տղեն լէ գնաց ուր տուն։ Տղեն զէրկու բեռ ցան տարավ դրեց ուր հոր մըղաղեն ու բացեց կծախեր։

Հերն ասեց.—Լա՜ո, էգի մըր անվան չվելի, գու զէգ էրկու բեռ ցան հ'որի՞ բերիր գրիր մըր մղաղեն։ Կուզի՞ս քզիկ էրկու բեռ օսկի իտամ, տար քզիկ կի ու խմե, թաքիլան զէգի հանե իմ մղաղից տար։

Տղեն ասեց.— Ցա՜մ կթողիս դնեմ քու մղաղեն, յա՜մ քզիկ տղութեն չըմ էնի։

Հոր ճար կտրավ, էլ ձեն չհանեց։ Իրեք օր մնաց, տղեն հորն ասեց. —Աբո՜, ընծիկ քիչըմ հախ կա էդա տեխու թուճրներու մոտ, բի էկո ա՜ռ։

Հերն ասեց.—Լաո՜, քզիկ ի՞նչ հախ կա էդոնց մոտ։

Ասեց.—Ճամբու հետ էրկու բեռ ցան իմ տվի ուրանց, ըշթա էդա լէ, ուրանց սանադն առ տուր։

Ասեց.—Լաո՜, ամոթ է, էրկու բեռ ցան էրթանք քսան թուճրի մոտե՞ն հ'ուղինք, էրկու բեռ օսկի իտամ քզիկ, տար, ինչ դինաա էրե։

Տղեն ասեց.—Իմ հեր դու իս, քզիկ կասիմ, բալքիմ դու առնիս, օր դու չառնիս, ես կարնամ առնիմ։

Տղեն հ'էլավ, օր հեր անկաճ չէրեց, գավաթ էրեց զքսան թուճարն զխադին ու զփաշեն առավ էկավ ուր տուն։ Կերան խմեցին։ Հանեց զսանադն տվեց խադու մոտ, ասեց.—Ընծիկ հախ կա էդա թուճրներու մոտ, կխնդրեմ օր առնես իտաս։

Խադին ու փաշեն սանադ կարդացին։ Քսան թուճրին ասին.— Էդա ձըր սանադն է, դուք էդ մարդուն էրկու բեռ ցան պիտի իտաք։

Ասին.—Հա՜, մըր պարտքն է, կառնենք իտանք։

Տղեն ասեց մշկին.—Գնա՜, մղաղից էրկու կոշտ ցան առ ու էկո։

Մշակն գնաց առավ էրկու կոշտ ցան ու էկավ։ Խադինն ու փաշեն ի՞նչ գինան ցանի մարիֆաթն ի՞նչ է։

Տղեն առավ զէրկու կոշտ ցան, զարկեց հ'իրար, կոտրան, անգին քարեր թափան միշեն։

Տղեն ասեց.—Իմ ցան էդա հըմլա ցան է էղի, չեք ավտընա՞, դրա էրկու բեռ լէ կա, բերենք կոտրենք, մեկ դարտակ էղավ, գիտեք

օր սուտ կասեմ։ —Ասեց խաղուն ու փաշին.—Դուք տեսաք, զգին կտրեք, յա՛մ էգ մարդիկ զիմ ցան իտան, յա՛մ զփարեն։

Խաղինն ասեց.—Ինչ կտրիմ, էտոր գին չկա օր գին կտրիմ։ Քսան թուճար լէ տնով ու տեխով քումն ին, կհ՚ուզիս աղատ էրե, կհ՚ուզիս՝ ջալատ։

Տղեն դարձավ հոր, ասեց.—Արո՛, ի՞նչ կասիս։

— Լաո՛,—ասեց,—քու մալն է, դու դինաս։

Ասեց.—Օր իմ մալն է, ես դվի էդա շաղամաթի ու թուճըրներու խաղըր,—բռնեց զսանադ էրեց հազար կտոր։

Թուճըրներ շնորհակալ էղան ու հ՚էլան գացին ուրանց տուն։

Հեր տեսավ օր տղեն խելոք էր, զուր ունեցածն ու չունեցած բերեց, թասլիմ էրեց տղին։ Մեկ օր լէ հեր քնուկ էր, տղեն տեսավ, օր հոր մուրքի մեշ բալնիքըմ կեր կապուկ։

Տղեն ասեց.—Ցա՞, իմ հոր սիրտ հ՚իսդակ չէ, զէդ բալնեք չի-տա հ՚իս։

Հանեց զբալնեկ, քունճ մըղազիմ դուռ կեր, գնաց բացեց ու մտավ ներս։ Տեսավ դարտակ հ՚օդեմ՝ է, մեկ ախչկա սուրաթըմ կա էդ տեխ կախուկ։

Տղեն օր սուրաթ տեսավ, ուշք գնաց գլխեն, հ՚ընկավ գետին։ Հեր քնուց զարթավ, տեսավ տղեն խեշ չէ, ձեռք թալեց մուրուք, բալնեկ մուրքի մեշ չէ։

— Հե՛յ վախ,—ասեց,—ես իմ աղից հ՚էլա։

Հ՚էլավ գնաց հ՚օդեն, տեսավ օր տղի ուշք հ՚ընցուկ է, հ՚ընկուկ դետին, բերեց ջուր լըցեց հ՚էրսի վրեն, զսիրտ մաժեց, տղեն հ՚էլավ նստավ։

— Տղա՛,—ասեց,—քզիկ ի՞նչ էղավ, դու հ՚որի՞ն հըմալ էղար։

— Արո՛,—ասեց,—յա՛ զէդ սուրբթի տեր կցուցուս ընծիկ, յա՛ քզիկ տզութեն չըմ էնի։

Ասեց.—Տղա՛, էդ սուրբթի տեր ձեռք չի գա, էդ սուրբթի տեր Թավրիզու խույումճի բաշու կնիկն է։ Էդ խույումճի բաշին բերեր է զուր կնիկ, դրի յոթ դռնով ներս, լուսուն կէլնի կփակե զդռներ, բալնըկներ կառնե ուր հետ, կէրթա դուքան, հ՚իրկուն կիգա կբանա մտնի ներս։ Նը՛ փանճարա կա, նը՛ էրդիք ու նը՛ ճամբախ։

Տղեն ասեց.—Արո՛, վալայի, ես կէրթամ էդ կնկա հ՚ետև։

Հ՚էլավ ուրին առավ էփեյի փարա ու լըփըմ անգին քար ու գնաց։ Գնաց Թավրիզու քաղաք հ՚էլավ դուրս, հարցուց.—Օսկերչեք հ՚ո՞ւր կրանին։

Ցուցուցին զօսկերչնոց, գնաց։ Գնաց, հարցուց.—Օսկերիչ բաշին ո՞րն է։

Ցուցուցին ասին.—Էդա է։

Գնաց կանավ խեչ, բարև տվեց։

Օսկերիչն զբարև առավ, ասեց.—Ուստա, ես խարիբ եմ, էկերիմ էդա տեխ, խաներ չըմ կառնա պառկի, ձըր տան բոլոր հըմալ հ՚օգեմ՚ չկա՞ քըրայիս ընծիկ ամսականով, քանիմ՚ ամիս զիմ առուտուրն էնիմ, հ՚էլնիմ էրթամ։

— Կա՛,—ասեց,—մըր տան կուշտ հ՚օդեմ՚ կա, ամսական քըրեն հիսուն խըռոշ է, գիկա՞ս, էկո զքզիկ տանիմ էնտեխ։

Տղեն ասեց.—Հիսուն խըռոշ չէ, թող հիսուն խըռոշ էղնի, հըմեն-հըմեն ես խաներ չըմ կառնա պառկի։

Առավ ուսն զտղեն, տարավ հ՚օդեն գրեց։ Տղեն է, հ՚էլավ ինչ օր պետք էր հ՚օդի թախըմ առավ, աղեկըմ զուր հ՚օդի սարկին դըրըստեց։ Տեսավ չարա չկա, չկարնա էրթա օսկերիչ բաշու տուն, զկնիկ տեսնա։ Հ՚էլավ օրըմ լէ կէրթեր շուկեն, տեսավ էրկու մարդ փետատ դրուկ փեճի ուրանց, կէրթեն, բարև տվեց, ասեց.—Դուք ի՞նչ մարդ իք։

Էնոնք ասին.—Մենք լըղմըճի ինք, լըղմ կբանանք։

Տղեն ասեց.—Ես օր գողտուկ բանըմ ասիմ, դուրս կհանի՞ք։

Ասին.—Հ՚որի՞ պիտի հանիք, զմըր հախ կառնինք։

Ասեց.—Քելե՛ք էրթանք։

Առավ ու էկավ։ Ասեց.—Էդա տեխեն լըղմըմ թալեք, էրթա հ՚էլնի օսկերչու բաշու կնկա հ՚օդի տակ դուրս։

Թալին լըղմ, գացին հ՚էլան օսկերչու բաշու հ՚օդի տակ, տվեց ղուրանց հախն ու հ՚էլան գացին։ Էդ տղեն էր, հ՚ըմնոր կէրթեր օսկերչու դուքան, օսկի կիտեր շինել, արծաթ կիտեր շինել։ Օսկերիչ լէ կիգեր հ՚ըմն օր կնկան կդովեր, կասեր. «Զասիս, տղեմ՚ էկեր է էդա տեխ, ուտիս չուտիս, հըմա զինք թամաշա էնիս, շատ խերով մարդըմ է»։ Տղեն է, լըղմըճիք օր ճամբու դրեց գնացին, ինք հ՚էլավ մտավ լըղմի մեջ էկավ, զէն փշուր տեխ օր մանցեր էր, տվեց ուր բանալ, հ՚էլավ մտավ օսկերչու կնկա խեչ։ Ուր աչքն ու կնկան օր ինկավ հ՚իրար, էրկուսի ուշք լէ գնաց։ Սորա կնկա խելք շուտ էկավ, հ՚էլավ ջուր լցեց տղի հ՚էրսի վրեն, խելք բերեց հ՚ինք։ Մեկ տըսնուհինգ օր հըմալ կէրթեր օսկերչու կնկա խեչ, հ՚իրկուն կիգեր ուր հ՚օդեն կպառկեր քներ։ Տըսնուհինգ օրն օր թըմավ, հ՚էլավ գնաց

Օսկերչուն ասեց.—Ուստա՛, իմ գործ էղավ, ես կէրթամ, իմ գործ էղեր է, էկա կարգվա կնիկըմ առա, կէրթամ։

Ասեց.—Վաղ էկո մըր տուն քիչըմ ուտինք-խմինք, օր մեկել օր հ՚էլնիմ ճամբախ էրթամ։

Ուստեն ասեց.—Շատ աղեկ, կիգամ։

Օր տղեն գնաց, ուստեն ուր մտքի մեջ ասեց.—Ես էդա մարդու հ՚ետևեն շատ խեր իմ տեսի, ես ի՞նչ նշան տանիմ էդոր կնկան։ —Աղեկ մատնեկըմ շինեց, առավ գնաց տղի հ՚օգեն։

Օսկերչու կնիկ լէ լըղմի միջով մտեր էր էկի տղի հ՚օդեն, եմակ կշիներ։ Հ՚իրկուն օր էղավ, ուստեն ու տղեն առան զիրար, էկան տղի հ՚օդեն, ուստեն զկնիկ տեսավ, ասեց՝ «Ցա՞, էդա մանի իմ կնիկ»։ Ուր մտքի մեջ ասեց, նստավ, կերավ խմեցին։

Տղեն կասեր.—Ուստա՛, հ՚ո՞րի չըս խոսա, իմ կնկան չըս հա՞վնի։

Ուստեն հ՚էլավ գնաց, կնիկ դուռ բացեց, ուստեն բռնեց զկնկա ձեռք, ուր ձեռքով զմատնեք էձգեց կնկա մատ ու թողեց գնաց։

Ուստեն բացեց ղդռներ մտավ ներս, տեսավ օր կնիկ ներս նըստուկ է, ասեց.

— Կնի՛կ, դու հ՚ոդա ի՞ս։

Կնիկն ասեց.—Հա՛, հոդ իմ, հ՚ո՞ւր պիտի էրթամ։

Ասեց.—Կնի՛կ, էդ տղեն օր հ՚ըմնոր ղխըսեն կէնեք քղիկ, կարգըվեր է, կնիկըմ առեր է, այնի մանիս դու։

Ասեց.—Մա՛րդ, հ՚որի իմ հեր ու մեր մինա՞կ ին զիս բերի, իմ պես էլ աշխըրքի մեջ չկա՞։

Պառկան քնան, հ՚էլան լուսմութ։ Տղեն խաբար տվեց ուստին, թե. «Ես կէրթամ, էկո զիս ճամբու դիր»։

Կնիկն ասեց իրկան.—Մարդ, հար հ՚էսօր զքղիկ առեր իմ, քղիկ բան չըմ ասեր ի, հ՚էսօր բի թարանճեմ՝ դիր էդա տեխ, գաբանքըմ բաց, հ՚էլնիմ տանիք, էդ կնկան օր շատ կգովիս, կասիս քղիկ կմտնի, տեսնամ ու հ՚իշնեմ հ՚իգամ ցած։

Մարդն ասեց.—Կնի՛կ, կհ՚էլնիս, ջուտ հ՚իջի ցած։

Բերեց դրեց թարանճեմ՝ ու թողեց գնաց։

Կնիկն հ՚էլավ տանիք, բերեց էրկու փետ կանկըցուց, հանեց զուր հալվրներ հագուց, յազմեն թալեց փետի գլխուն, թորկեց հ՚իջավ էկավ ցած, մտավ լըղմի տրկով, էկավ տղի խեչ։

Օսկերիչ օր տեսավ զկնիկ տանեք, ասեց.—Շրն հեր, ինչ ջուտ հ՚էլավ տանեք։

Զիանք քաշեցին բարիմնաց էղան օսկերչուց, տղեն ու օսկերչոբ կնիկ հ'ընկան ճամբախ, գացին։

Էնդոնք թըղ էրթան ուրանց ճամբու հետ, մենք դառնանք վըր օսկերչում։

Օսկերիչ գնաց, մտավ տուն, կանչեց զկնիկ, ասեց՝ արի ցած։ Կնիկ չէկավ։ Փետ լիզու կհասկնա՞։ Քաշեց թունդրան անթրոց ու հ'էլավ տանիք օր կնկան զարկե։ Փետն օր զարկեց, տեսավ օր էդի ուր կնիկ չէ, փետ է՝ կնկա հալվըներ հագուկ վրեն, խելք թոցուց ու էղավ բուղալեմ՝ հ'ընկավ քաղքի լենք ու հ'էրկենք, սարսարի կօլըրդեր։

Տղեն առավ զկնիկն ու էկավ, էկավ հ'էլավ ուր հոր տուն, բըռնեց զուր հարսնեք, յօթն օր հարսնեք էրեց, էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ՝ լէ՝ անկաճ էնողին։